Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թ.
հուլիսի 19-ի նիստի N 29
արձանագրային որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

| Միջոցառման անվանումը | Պատասխանատու | Համակատարող | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|---|---|
| 1.Քաղաքային պոլիկլինիկաների կառուցվածքային և կազմակերպական նոր մոդելի մշակում | | | | |
| 1) Քաղաքային պոլիկլինիկաների կառուցվածքային և կազմակերպական նոր մոդելի վերաբերյալ իրավական ակտերի մշակում՝ ձևավորելով առանձին մոտեցումներ հանրապետության մարզերի և Երևանի պոլիկլինիկաների նկատմամբ: | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2013 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Քաղաքային պոլիկլինիկաների կառուցվածքային և կազմակերպական նոր մոդելը մշակվել է՝ հանրապետության մարզերի և Երևանի պոլիկլինիկաների վերաբերյալ առանձին մոտեցումների ներառմամբ: |
| 2) Պոլիկլինիկաների նեղ մասնագիտական ծառայություն մատուցող կաբինետների տեսակների և բժիշկների հաստիքների ձևավորման վերաբերյալ չափորոշիչների մշակում և Հայաստանի Հանրապետության | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | | 2014 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | Պոլիկլինիկաների նեղ մասնագիտական ծառայություն մատուցող կաբինետների տեսակների և բժիշկների հաստիքների ձևավորման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| առողջապահության նախարարի հրամանով հաստատում: | | | | նպատակով ռազմավարական ծրագիրը մշակվել է: |
| 3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման հավելված 1-ի 4-րդ կետով սահմանված՝ «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, գյուղական բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջների ու պայմանների» վերանայում: | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | | 2014 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման հավելված 1-ի 4-րդ կետով սահմանված՝ «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, գյուղական բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները» վերանայվել են: |
| 2. Քաղաքային պոլիկլինիկաների գործունեությունը, ֆինանսավորումը և փոխհամագործակցությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի մշակում և հաստատում՝ ելնելով դրանց հզորությունից և կարգավիճակից | | | | |
| 1) Պոլիկլինիկաների նոր կառուցվածքային մոդելին համահունչ ֆինանսավորման և վարձատրման կարգերի մշակում և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատում: | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | | 2014 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Պոլիկլինիկաների նոր կառուցվածքային մոդելին համահունչ ֆինանսավորման և վարձատրման կարգերը մշակվել և հաստատվել են: |
| 2) ՀՀ մարզերի բժշկական կենտրոնների պոլիկլինիկաներում կառուցվածքային | Հայաստանի Հանրապետության | Հայաստանի Հանրապետության | 2014 թ. դեկտեմբերի | ՀՀ մարզերի բժշկական կենտրոնների պոլիկլինիկաներում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| փոփոխությունների իրականացում, այդ թվում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների, անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման ու տնային պայմաններում բժշկական օգնության կազմակերպման մեխանիզմների մշակում և ներդրում: | մարզպետարաններ | առողջապահության նախարարություն | 3-րդ տասնօրյակ | կառուցվածքային փոփոխություններն իրականացվել են, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների և անվճար ու արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման և տնային պայմաններում բժշկական օգնության կազմակերպման մեխանիզմները մշակվել և ներդրվել են: |
| 3) Երևանի քաղաքապետարանի պոլիկլինիկաներում կառուցվածքային փոփոխությունների իրականացում, այդ թվում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների և անվճար ու արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման և տնային պայմաններում բժշկական օգնության կազմակերպման մեխանիզմների մշակում և ներդրում: | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | 2014 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Երևանի քաղաքապետարանի պոլիկլինիկաներում կառուցվածքային փոփոխություններն իրականացվել են, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների և անվճար ու արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման և տնային պայմաններում բժշկական օգնության կազմակերպման մեխանիզմները մշակվել և ներդրվել են: |